


ՅԻՇԱՏԱԿ ԳԷՈՐԳ ԿԱՌԱՎԱՐԵՆՅԻ

U.

5 Մեպտ. 1946. Միլանէն Վենետիկ՝ Վարուժան Թոքաճեանի ուղղուած հեռագիր մը կը գուժէ մահը իր սիրեցեալ ուսուցչին՝ Գէորգ Կառավարեցի: Ուրիշ հեռագիր մը Տիար Յ. Փոթուքեանէն կը տեղեկացնէ այս տխուր լուրը Միխիթ. Միաբանութեան Գերպ. Աբբահօր:

Այս յերաւի անակնկալ գոյժը՝ երկար ժամեր ցաւազին ներգործութեան մը տակ կը պահէ տարաբախտ բանաստեղծին բոլոր բարեկամները:



Բանաստեղծ Գ. ԿԱՌԱՎԱՐԵՆՑ

Մահը տեղի ունեցած է առտուն, յանկարծակի, և թաղումը պիտի կատարուի յաջորդ օր։ Ուշ է արդէն։ Կը հեռախօսեմ Ստյոբ Գազար, «Բազմավէպ»-ի խմբագիր Հ. Մեսրոպ Վրդ. Հանաչեանի, որպէսզի բարեհաճի յանձն առնել թաղմանական արարողութեանց նախագահու-

Թիւնը: Աբբահայրը սիրով կ'արտօնէ և վարդապետը, թողլով ամէն զբաղում, շուտափոյթ, կը հասնի կայարան: Շոգեկառքը ժամը 22,15ին կը չարժի դէպի Միւսն:

6 Սեպտ. 1946, առաւօտ. Գարոննոյ. արուար-
ձան Միլանի. համեստ տնակ մը. մերկ պա-
տերով սենեակ մը, աղքատ անկողին մը, որուն
վրայ կը հանգչի, «մարտէն յետոյ՝ կարծես
յոգնած կը ննջէ», ազգանուէր գործունէու-
թեամբ հարուստ, հայ մշակոյթի զինուոր մը,
Գէորգ կառավարենց:

Մնարին մօտ կը հսկեն արտասուածոր՝ այրին և երկու դեռատի զաւակները: Գլխուն վերեւ կը ծիւրին երկու մոմեր: Սեղանի մը վրայ կ'ենրեւին հայ թերթեր, «Հայրենիք», «Արեւմուտք», և Շաւարշ Նարդունիի վերջին երկերը, նուիրուած հանգուցեալին՝ ձեռագիր ընծայականով մը: Թուղթի բեկորի մը վրայ կը կարդամ:

« Այ իմ տղաս, այ իմ տղաս...
հոգի բլլամ տերեւիդ... ».

Թերաւարտ ճի՛շ մը կարծես, արձակուած հղերա-
կան պահու մը:

Հեռգհետէ կը հասնին բարեկամներ և ծանօթ-
ներ: Դերասան Չափրաստ կը հակի իր վաղեմի
մտերմին անշունչ մարմնոյն վրայ ու կը փղձկի:

Ազնուական հայուհի մը, Տիկ. Ֆեներճեան,
առանձին չի թողուր հանգուցեալին այրին:

Կը հասնի նաեւ Տիար Զ. Փոթուքեան, ան՝ որ տուն մը տուած էր Կառավարենցիին, և միաժա-
մանակ գործ մը հայթայթած՝ իր առեւտրական
հաստատութեան մէջ։ Բանաստեղծին տրուած
օգնութիւնը, միայն բանաստեղծին տրուած չէ։
Ի՞նչ փոյթ թէ այդ օգնութիւնը հնարաւորու-
թիւն չէր ընծայեր Կառավարենցիին՝ իր հօգիին
առագաստները պարզելու, ինչպէս էր երբեմն,
լաւագոյն օրերու մէջ. բայց՝ վերջապէս ոտքի
կը պահէր զինք. ուրեմն երախտաւոր թող մնայ
Տիար Փոթուքեան, և իր վարձքը թող ուղիղ
հասնեալէն եւ կապառած գոհողութեան հետ։

Անանամուտ է: Մեղմ հով մը կը շնչէ, և առաջին տեղոյն տերեւները կը թօթափին ծաւ

1946

«երէն: Երկինք բարակ անձրեւ մը կը տեղայ-
Գէորգ Կառավարենց «մարտէն յետոյ՝ կարծես
յոգնած կը նսջէ», և երազի մը մէջ, կարծես,
որ վերջ չունի, կը մրմնջէ.

« Վիենն անձրեւին կը հեծէ՛ երդիս Վերայ միալար՝
Վիենն անձրեւին կը հեծէ՛.
Ա՛հ, Ի՛նչ անոյշ թախիծ է
Շոճին երունն մէջ դալար... »՝

Կ'որոշուի հոգեհանգստի առաջին արարողու-
թիւնը կատարել զիւղին եկեղեցւոյն մէջ: Ազ-
գականներէ և մտերիմներէ բաղկացած ընտիր
Թափօր մը կազմուած է արդէն, դագաղին շուրջ,
որ կը շարժի դէպի եկեղեցի:

« Դժնեհերուն մէջ դաւար
Եւ մշկեհի մշուշին
Ծիածանի մը յոյսին
Յառած գոհար առ գոհար
Կու լալ երկինքն անդադար... »

Թափօրը յամբընթաց կը յառաջանայ գիւղին
ամալի ճամբուն վրայ. երկար ճամբայ մը՝ զոր
հէք բանաստեղծը շոգեկառքի կայարանէն մինչեւ
տուն և փոխադարձաբար, օրը երկու անգամ,
առտու և իրիկուն, տաժանագին կը սպառէր։

Մեր ախուր տրամադրութիւնները կարծես կը
թրթռան միխթարուած՝ երբ կը տեսնենք որ
թափօրը կը դիմաւորեն Միլանահայ ազնիւ
ընտանիքներ։ Ահա՛ ամենուն ծանօթ և սիրելի
Տիկին Մարգարիտ Պօղոսեան, Տիկ. Քնարիկ
Եղիկեան, Տիկ. Ա. Սրապեան, Տիկ. Ժիւլիէ
Պապայեանց, Օր. Պերճուհի Պօղոսեան, համալ-
սարանական ուսանողներ, և ուրիշ շատեր, որոնց
անուններուն ծանօթ չեմ, բայց որոնք բոլորն
ալ արժանի են զրուստալից յիշատակութեան
հայ բանաստեղծի մը իրենց վերջին մեծարանքն
ընծայելու փութկոտութեան մէջ։

Հ. Մեսրոպյանը, թիւ պատարագ մը կը մատուցանէ: Այնուհետեւ դազադը կը գետնորէն առժամաբար, տեղւոյն գերեզմանատան մէկ սրահին մէջ:

7 Մեկտ. 1946. դագաղը կը փոխադրուի
Գարոնիոյն Միլան, Մուզեո դի գերեզմանա-
տունը, յաջորդ օր տեղի պիտի ունենայ ազգային
յուզարկաւորութիւն: Օրուան ընթացքին՝ կարելի
կ'ըլլայ իմանալ թէ կառավարենց, որ պատե-
րազմին բերամաք կը գտնուէր Միլան իբրեւ
« շատերէն մէկը », նախ նիւթական և բարոյա-
կան մեծ տնտեսական ապագաներու մէջ էր

գտնուած, բայց հետզհետէ սկսած էր ծանօթացը-
նել ինքզինքը, յաջողութեամբ ղեկավարած էր
հայկական ձայնաւոր պատարագ մը, բանախօ-
սած էր Ապրիլեան նահատակներու նուիրուած
սգահանդէսի ընթացքին, խոր տպաւորութիւն
գործելով ներկաներուն վրայ: Եւ սկսած էր
բոլորին սիրոյն և յարգանքին առարկայ ըլլալ:

8 Սեպտ. 1946. Կէրակի. Հ. Մեսրոպ Վրդ. Զերդողայի եկեղեցւոյն մէջ, Մուգաթթոյ գերեզմանատան մերձակայ, ձայնաւոր պատարագ կը մատուցանէ: Համակրելի երիտասարդ մը՝ Տօթ. Աւագեան կը ղեկավարէ երգչախումբը: Միւշնահայ՝ ամենէն ընտիր անձնաւորութիւնները ներկայ են. Տիար Վահրամ Ֆեներճեան, Տօթ. Արզումանեան, ձարտարագէտ Յարութիւն Գալանճեան, Տօթ. Եղիկեան, Տիար Քեհեայեան, բազմաթիւ տիկիւններ, ուսանողներ:

Պատարագիչ քահանան իր հոգեշունչ խօսքով
կր մխիթարէ վշտակիրները:

Դազաղը գետեղուած է քառանիւ ձեռնակառքի մը վրայ, զոր պատարագէն ետք, հայ երիտա-

Մուկ, թանձր թախիժ մը կը յածի բոլորին
դէմքերուն վրայ:

Մուլթ, թանձր ամպ մը կը շրջէ երկնակա-
մարին տակ:

« Այս ամառը, Տէր, ուսկինք է
Հոգւոյս վերայ հոգմավար,
Այս ամառը, Տէր, ուսկինք է... ».

Կանգ կ'առնեմ թարմ հողերուն առջեւ, յուղարկաւորներուն միջեւ, ու կ'ըսեմ.

«Այս խոնարհ դագաղը կը պարկեպակէ իր մէջ սիրա-
մը՝ որ շուրջ քառասուն տարի անդուռ բարակեց ի սէր-
իւր ազգին»

Իր ազգին,
Հայ ուսուցիչ մը, հայ գրականութեան անխոնջ մշակ
մը կը զետեղէ հոս, Ու, չկայ աստարեզ մը՝ որ բլլայ
այնքան, զհօրէն գեղեցիկ, այնքան տեւականօրէն լճիտ
որքան գրագէտ - ուսուցիչն, ընդգրկածը,
հայ գրականութեան համար, որովհետեւ

Այս իրական է ընդհանուրին համար. որովհետեւ
գրչի վաստակաւորը նուիրուած է սոսկ հոգինեւրու մշակ
ման, սրտեքուն ազնուացման, մտքեքուն զարգացման գե
րազոյն գործին, ի՜նչ վնիթ թէ իւր կեանքին Լոյսը կը
սպասի անագորոյն արագութեամբ. կը բաւէ որ պայ
ծառանան զինք ջրջապատող մարդկային եակները բոլոր

Բայց այս որքան աւելի սրտայուզօրէն իրական
մեր ազգին համար, բազմաչափաբար, վայրափառին հա
ազգին համար: Օտարները նիւթապէս և բարոյապէս և
քաջախիբին ու ևլը պաշտպանեն իրենց մտաւորականները

զոհողութեան և մերթ նոյնիսկ արժանիքի տեսակէտէն շատ աւելի ստորադաս՝ քան հայ մտաւորականները՝ որոնք դժբախտաբար, ինչպէս ծանօթ է բոլորին, կը վարեն կեանք մը դժնդակ, անլուր զրկանքներով և հեռուական մեծ դրուագներով ակադոմն:

Եւ, ըսէ՛ք ինձի, կա՞յ յերաւել աւելի վեհ, աւելի սուրբ իրականութիւն մը քան այն՝ զոր կը պարզէ մեր աչքեւրուն առջեւ հայ մտաւորականը, որ ի հեռուէս հազար ու մէկ դժուարութեանց կը շարունակէ հայերէն գրել, որպէսզի չմեռնի՝ այդ բազմադարեան լեզուն, որով հայ բնկացին յօրինեց հոյակապ, և ոեւէ ուրիշ լեզուի մէջ անմասն իր աղօթքները:

Այդ վաստակաւոր, բազմատանջ հայ մտաւորականներու փաղանգին կը պատկանէր նաեւ Գէորգ Կառավարենց, որ ոչ միայն մշակեց հայ լեզուն՝ այլ և զայն սորվեցուց հազարաւոր մանուկներու՝ որոնք այսօր տիպար հայեր հանդիսացած են, և ի խորոց սրտի կը հառաչեն ի լուր իրենց սիրելի ուսուցչին անդարձ բաժանման զուժին:

Այսպէս ուրեմն, կը մեկնին նաեւ դուն, յաւէտ սիրելի Գէորգ Կառավարենց, հայրենիքի կարօտը սրտիդ մէջ, և զաղափարապաշտի մեծ տեսիլքդ տակաւին լուսածա՛ծան՝ աչքերովդ առջեւ: Թողով ուր սիրելիներդ հա՛մօրէն. բայց ինչ որ կատարած ես՝ բաւական է՝ տեղաւորելու համար քեզ՝ հայ ազգի ընտիր զաւակներու լուսահոյին մէջ:

Հանգչէ՛ յաւէտ. դու երգերովդ պիտի ապրիս մեր մէջ, քու հոգիէդ արտահոսող լոյսով պիտի շերմացնես մեզ: Դուն չես մեռած. իբր նիւթ միայն չես խօսիր, բայց իբր զաղափար՝ կը շարժիս, կը բարբառիս մեզի հետ, կը ժպտիս մեզի:

Վաստակաբեկ ոսկորներովդ վրայ՝ օտար հողը Թող Թեթեւ ըլլայ, ո՛վ պանդուխտ բանաստեղծ, ո՛վ ամենուս սիրելի Գէորգ Կառավարենց »:

Թանձր, մուծ ամպ մը կը շրջի երկնակա՛մարին տակ:

Մութ, թանձր թախիժ մը՝ կը յածի բոլորին դէմքերուն վրայ:

Կը խօսի Արամայիս Սրապեան, բանաստեղծ, բժիշկ, Հայ Մշակութային Միութեան նախագահ և ներկայացուցիչ « Յառաջ » օրաթերթի: Անցոյց կու տայ թէ քիչ օրերու մէջ՝ որքան լաւ ճանչցած էր հանգուցեալը:

Հրանդ Բամպակեան կ'արտայայտուի իբր Կառավարենցի հին օրերու աշխատակից և ըստ այնմ մատնանիշ կ'ընէ անոր այլուր ծանօթ՝ և միանգամայն թաքուն առաւելութիւնները:

Արտաշէս Ղարիբեան « Յառաջ Նահատակ »-ին մէջ կը տեսնէ զայն յօրինողին ոգին:

Եղուարդ Չափրաստ յուզումնալից զրոյց մը

կը կատարէ իր վաղեմի բարեկամին հետ, որուն մահուան չի հաւատար կարծես:

Գալուստ Մկրեան քերթուած մը կ'ոգէ « Գերեզմանի Ծաղիկներ »-էն, նշանակալից մեկնաբանութիւններով:

Եւ ահա, թարմ հողերուն վրայ, դազաղին առջեւ կ'երեւի Վարուժան Թորոսեան, մին կառավարենցի ամենէն սիրասուն աշակերտներէն, ան իր սրտին թեւերը կը բանայ և հոգեւոր զաւակի մը յատուկ հազուագիւտ սլացքով կ'արտասանէ դամբանական մը՝ որ ահա՛.

« Աղբիւսակնի ափերէն՝ ուր ասկէ սոսկ մէկ ամիս առաջ պատին ու հաճոյքն ունեցած էինք քեզ հիւրս սիրելու մեր քանիցս քանդուած և վերաշինուած բոյնին մէջ, եկած եմ վերջին խօսքս հոգիդ ուղղելու:

Այս նոր շրջանակին մէջ՝ ուր քեզի տրուեցաւ ապրել մէկ տարի միայն, ոգեկան անդհներով առիւ և ցաւազին խորհրդածութիւններով ծանրաբեռն, չկայ մէկը՝ որ քեզ անքան խոր կերպով ճանչցած ըլլայ, այնքան ջերմ կերպով սիրած որքան նախկին աշակերտ մը, հոգեւոր զաւակ մը, որուն և որոնք նմաններուն առատօրէն և շքեղօրէն բաշխեցիր մտքիդ լոյսը, սրտիդ հրայրքը:

Պոլսէն մինչեւ Գորֆու, մինչեւ Աղեքսանդրուպոլիս, մինչեւ Աթէնք, ուր կ'արձագանգեն դեռ երգերդ, և վերապրողները քեզ կը փնտռեն ի զուր, աշակերտներու տմբողջ հոյլեր ունին՝ որոնք պիտի սահմակին ի լուր տառապալից կեանքին՝ զոր վարեցիր այստեղ, և կսկծալի մահուան՝ որ ճակատագրիւր այսքան մոայլ պարագաներու մէջ սահմանեց քեզի:

Դուն որ ոգին էիր մեծազանգուած հայ գաղութի մը, յունահայ գաղութին, որ անխտիր իր բոլոր հոսանքներով պաշարած էր քեզ անհուն խանդավառանքով, յարգանքով սիրով, և որ խանդավառութեան ալիքներով կը յորդէր՝ ամէն անգամ որ տաղանդդ կը բացայայտէիր իր առջեւ, եկար հոս, գրեթէ անծանօթ, վստահօրէն քիչերու մեծարանքին առարկայ, և վարեցիր սովորական պաշտօնեայի մը կեանքը, աւելի աղքատ՝ քան սովորական պաշտօնեայ մը. կարծես քեզի համար նաեւ ըսած ըլլար Տանգէ. « Դժբախտ օրերու մէջ՝ երջանիկ օրերը յիշելի աշելի մեծ վիշտ յիշ »:

Ինչ դժիւմ ճակատագիր. Դատ դժուար է, եթէ ոչ անկարելի, որ ազգը քեզի նման զաւակ մը հասցնէ, սակաւաթիւ տարիներու ընթացքին: Ի դժուր պիտի փնտռեն քեզ անոնք՝ որ կարողութիւններդ կը գնահատէին, բանաստեղծի, ուսուցչի, ղեկավարի կը գնահատէին, և հեռուէն կը հետեւէին քեզի երգահանի, թարգմանչի, և հեռուէն կը հետեւէին քեզի և կը ծրագրէին քեզի արժանավայել կեանք մը ստեղծել: Գրական երկասիրութիւններով մասին, ամէնքն ալ խորքով առողջ և ձեւով մշակուած, հոս կարելի է անխորքով առողջ և ձեւով մշակուած, հոս կարելի է ան

դադառնալ, ուրիշներ՝ աւելի իրազեկ՝ պիտի կատարեն զայն այլուր, այլ ժամանակի մէջ:

Բայց ինչպէս հաշտուիլ այն զաղափարին հետ՝ թէ դուն չկաս այլեւս, դո՛ւն՝ որ կեանք էիր ամբողջ, ինչպէս կարելի է համոզուիլ որ կրնայ քայքայուիլ էակ մը՝ որ լոյս էր ամբողջ:

Ո՛չ, դուն կ'ապրիս մեզի համար, կը շարունակես շողալ մեր վերեւ:

Որովհետեւ աշխարհի սովորական բախտաւորներու վերջին կայանը՝ գերեզմանն է, ուր ցրտութիւն կը տիրէ, ու խաւար:

Մինչդեռ քեզի նման էակներու վերջին բնականայրը՝ մարդկային սիրտն է, ուր ջերմութիւն կայ ու լոյս:

Հանգչէ՛ այդ լոյսերուն մէջ, ո՛վ անմահական բանաստեղծս, պաշտելի ուսուցիչս, Գէորգ Կառավարենց »:

Արցունք կայ բոլորին աչքերուն մէջ:

« Երեւանի մը յոյսին

Յառած զոհար առ զոհար

Կուլայ երկինքն անդադար »:

Ընդարձակ է Մուգոքոյ, և այցելուներու անդուլ երթեւեկ մը կայ. Արցունք ու ծաղիկ բերած են, բոլորն ալ, իրենց սիրելիներուն: Բայց ծաղիկապսակը՝ որ կը հանգչի Կառավարենցի դա՛շաղին վրայ շքեղ է ու կարծես տարաշխարհիկ, հիւսուած՝ Տիկին Ժիւլիէթ Պապայեանցի սրտով: Սգաւորները, որ բոլորուած են դազաղին շուրջ՝ անսովոր էակներու երեւոյթն ունին: Լեզուն՝ զոր կը խօսին անխմանալի է, խորհրդասքող: Արցունքը՝ որ կը հոսի հայ մայրերու աչքերէն, վճիտ է, դառնաղի:

Օտարները չեն գիտեր թէ խումբ մը պանդուխտներ եկած են յանձնելու հողին, ոչ հայրենի, իրենց պանդուխտ մէկ բանաստեղծը:

Յետմիջօրէ: Արեւը կը շարունակէ ծուարիլ ամպերուն տակ:

Հողակոյտը յարդարուած է արդէն: Կը բաժնուինք հայ մշակոյթի պատնէշին վրայ ինկած զինուորէն, զինք թողով « իր փառքին հետ առանձին »:

Բ.

« Արեւմուտք »-ի մէջ կը կարդամ. « Կառավարենց ծնած է 1892ին Պոլսի մէջ. յախնական ուսումը առած է Իզմիրի Վիեննական Միութեաններու մօտ (1900-4), յետոյ Պարսիկայի Ամերիկեան վարժարանը (1904-8), տիպակի Ամերիկեան վարժարանը

1909էն 1914 եղած է ուսուցիչ Անգարայի հայ վարժարաններուն և յետոյ ալ Սկիւտարի Սեմերեան վարժարանին մէջ: 1922էն ի վեր մեկնած է Յունաստան, ուր ուսուցիչ եղած է մինչեւ վերջին պատերազմը »:

Այս քանի մը տողերուն մէջ, զոր յիշեալ պարբերաթերթին խմբագրութիւնը հրատարակած է, առաջին առթիւ, ի լուր գուժին, չի կրնար ամփոփուիլ արդիւնաշատ ուսուցիչի մը ամբողջ վարքը: « Արեւմուտք » և ուրիշներ պիտի խօսին անշուշտ, հետագային, ընդարձակօրէն հանգուցեալին շուրջ: Բայց ամենէն աւելի աշխարհի չորս կողմը ցրուած իր աշակերտներն են որ կը պարտին բացայայտել անոր նկարագրին լուսաւոր գծերը, անոր մտքին և սրտին առաւելութիւնները, որպէսզի ան օրինակ և խրախոյս հանդիսանայ ծաղկահասակ այն հայ յորդիներուն՝ որոնք կ'ուզեն ընդգրկել դաստիարակի նուիրական ասպարէզը:

Ես, հոս, իմ գիտցածս պիտի արձանագրեմ միայն:

Գէորգ Կառավարենցը տեսած եմ, առաջին անգամ, Գորֆուի անգլիական « Լորտ Մեյքլըս Ֆլենտ » որբանոցին մէջ:

Մենք հազիւ տասնամեայ մանուկներ էինք՝ և երգի դաս կու տար մեզի:

Վահան Թեքեան Յոնիականի այդ կղզիին սիրուն քերթուած մը նուիրած է. կը յիշեք անշուշտ. այսպէս կը սկսի.

« Գորֆու, հրմայքեղ օղակին մէջ գիւս Բոնե՛ր կը տանիս... »:

և այսպէս կ'աւարտի.

« Գորֆու, հրմայքեղ օղակը յանկարծ կը գանձի կոտորած. Երկրու վերայ նետուած օրօրոց, Օրէ՛ դուն, օրէ՛ սրտերն հայ տղոց... »:

Կը խոստովանիմ՝ որ այդ չքնաղ կղզիէն աւելի Կառավարենցի պարզ, քնքոյշ երգերն էին որ կ'օրօրէին, հեշտիւ, մեր սրտերը:

Մենք ունէինք մեր պաշտօնական երգը, որուն թէ՛ բառերը և թէ՛ եղանակը գործն էին Կառավարենցի.

« Աւերէն աշխարհի, մոխրէն արգաւանդ Հոգի ու Թեքէք առած փիւնիկներ,

Մահու մանգաղէն, հուրէն հընաւանդ
Անտես առնըւած անոյշ ծաղիկներ...
Համակ բոյր ու շաղ
Երանգ ու ծիծաղ
Մենք անապատի ծիւեր լուսաշեր
Պիտի հոգեգրաւ
Չըմենինք բընաւ
Քանզի մեզ Աստուած լացո՞ղն է օծեր...»

Հատ լաւ կը յիշեմ թէ կառավարենց, այդ խտտաբերէ և միանգամայն գուարթաբարոյ երիւ տասարդը, (երեսուն երկու տարեկան էր այն ատեն) «Լորտ Մեյըրս Ֆընտ»-ի ամենէն սիրուած ուսուցիչն էր, որովհետեւ դատաւոր չէր, այլ գորովալիւր հայր՝ հայկական մեծ արհաւիրքէն հրաշքով փրկուած որբերուն համար:

Այնուհետեւ եկան նաեւ Յովհ. Ասպետ և Թէոդիկ. և այս երեք մտաւորականները իրարու հետ կը մրցէին կարծես իրենց սրտին բարու թիւնն ու գորովանքը բաշխելու համար, առաւորէն, ծնողագուրկ հայ մանուկներուն:

Ու երբ վահան Թեքէան ժամանեց Գորֆու իբր ընդհ. քննիչ հայ որբանոցներու, Ապրիլի օր մը սգահանդէս մը սարքուեցաւ: Հայ մանուկները կ'ողբային իրենց հայրերուն և մայրերուն կորուստը, Թեքէանի բառերով, կառավարենցի եղանակով: Պիտի չմոռնամ երբեք այդ օրը:

Բարձրագոյն դասարանի աշակերտները 14-16 տարեկան տղաք, բոլորն ալ համակուած էին գրականութեան հանդէպ անհուն սիրով, և պաշտամունքով կ'արտասանէին Գուրեանի, Մեծաբենցի, Վարուժանի, Սիամանթոյի, և ուրիշներու անունները: Ամենէն չոր խառնուածք ունեցող պատանիներն իսկ բանաստեղծ կը զգային իրենք զիրենք, և կը գրէին սիրուն ոտանաւորներ, զորս կառավարենց կը սրբադէր գուրգուրանքով: Ասոնցմէ անոնք՝ որ ցոյց կուտային իրական կոչում մը՝ առարկայ կ'ըլլային աննախանձ և վեհանձն իրենց ուսուցչին բոլորանուէր քաջալերութեան: Ան իր հոգիէն մաս մը կը դնէր աշակերտներու առաջին թովթովանքներուն վրայ և իր լեզուին հարստութիւնները կը փոխանցէր անոնց:

Թոյլ տուէք որ այստեղ յիշատակեմ քանի մը անուններ: Ստոյգ է այդ պատանիներէն ոչ մէկը կրցաւ մեծ համբաւի մը հասնիլ. բայց եթէ պարագաները թոյլատրէին, և եթէ անողոր

կենսապայքարը չկլանէր զիրենք, անտարակոյս անոնցմէ իւրաքանչիւրը տիպար մտաւորական մը պիտի հանդիսանար. Զաւէն Կահապետեան, (Զեւս), որուն հանդիպեցայ, 1927ին վենետիկ, Մուրատ-Ոսկայէլեան վարժարանին մէջ, երբ ան կը բոլորէր իր վերջին տարին, իսկ ես նոր մուտք կը գործէի հոն: Որբը՝ որբին ուղղեց բարի խորհուրդներ, զորս այսօր իսկ կ'արժեւորեմ. Զաւէն իր դասարանին ամենէն աչքառու պատանին էր և օժտուած էր գրական սիրուն տաղանդով մը, որ կառավարենցին կը պարտէր շատ բան: Գեղամ Աթմաճեան, (Ա. Սեմա), որ հրատարակեց «Զրահաւոր Գարուն» խորագրով ընտիր քերթուածներու հատոր մը, և որ աւագ, իր ծաղիկ հասակին մէջ ինկաւ աշխարհաստան երկրորդ պատերազմին ընթացքին՝ Ֆրանսայի դատին համար: Ղազար Հաճեան, որ քսան տարեկանին ցաւալիօրէն մահացաւ Աթէնք: Միշէլ Բարձիկ, Յ. Սիրանեան. Գրիգոր Պետիկեան, և ուրիշներ, որոնց ինչ պատահեցաւ, չեմ գիտեր: Բայց կրնաք փնտնել 1930ին հրատարակուած «Զանք»ը, պարբերաթերթ նորագոյն հայ գրողներու, և հոն խմբուած պիտի տեսնէք այս տղաքը, իրենց քերթուածներով, որոնցմէ մէկ քանին յիշուի շատ սիրուն են:

Կառավարենցի կեանքին նուիրած յօդուածիս այս երկրորդ մասը փակելէս առաջ՝ պարտիմ ըսել՝ թէ ան իր հոգեւոր զաւակներուն բաժնեց իր սիրտը հաւասար չափով, առանց անտեսելու նոյնիսկ ամենէն համեստները, որովհետեւ անոնք բոլորն ալ նոյն բազմաչափար ազգին սիրասուն բեկորներն էին:

Երկար տարիներ ետք՝ տարաբախտ բանաստեղծին հետ հանդիպումս տեղի ունեցաւ 1945ին վենետիկ: Իտալական նորակազմ Զինուորական Գերագոյն իշխանութիւնը զիս գործով կ'առաքէր Միլան: Հոն է որ իմացայ թէ կառավարենց՝ Թորաճեան եղբայրներու հետ՝ ապաստանած է Ալբիականի այդ անզուգական քաղաքը: Փութացի հոն, մեծաւորներու հրամանով: Հրաւիրեցի Կառավարենցը «Ապրիկոյ Մոնաքոյ», ուր իշխանած էի քիչ օրերու համար: Ընկճուած գտայ զինք, տարիներու բեռին և մանաւանդ անստոյգ գոյավիճակի մը հնչունքներուն տակ զգալիօրէն կրած: Քաջալերեցի զինք: Գիտէի որ շուտով պիտի բարւոքէր իր վիճակը: Այնուհետեւ առիթ ունեցայ իր մասին խօսելու մեր սիրելի

աբբահօր հետ, որ իր սրտին յատուկ բարու թեամբ յայտնեց թէ իր ձեռքէն եկածը պիտի չզլանար այդ անտէրունչ մտաւորականին:

Երբ այս տարի, օգոստոսին, դարձայ վենետիկ, Կառավարենցը հիւրասիրուած գտայ Թորաճեան ընտանիքին մօտ: Հոն է որ առիթ ունեցայ ճանչնալու նաեւ իր յոյժ գուարթախօս, սրամիտ ոգին: «Տպուած էջի մը պէս չեմ սիրեր խօսիլ» կ'ըսէր, և հինէն ու նորէն, սարէն ու ձորէն կը պատմէր այնպիսի աղուոր բաներ՝ զորս մոռնալ կարելի չէ: Զուարթ տրամադրութեան մէջ էր: Գերպ. աբբահայրը խոստացած էր զինք ընդունիլ իբր ուսուցիչ՝ Միլթարեան վարժարաններէն մէկուն մէջ: Կը յուսար զաւակներուն համար ալ լաւագոյն կարգադրութեան մը միջոցներ գտնել: Միլանի գաղութը հաստատած էր խոստմնալից աղջկան երաժշտական կրթութիւնը հովանաւորելու իր կամքը: Մանչ զաւակն ալ, հազիւ բացուէր վենետիկի Մ.-Ռ. վարժարանը, հոն պիտի ընդունուէր: Զուարթ տրամադրութեամբ մեկնեցաւ Միլան, շարունակելու համար, առժամաբար, Փոթուքեանց մօտ, իր պաշտօնը:

Այնուհետեւ կիպրոսէն եւս հրաւէր ստացեր էր իբր ուսուցիչ հոն պաշտօնավարելու համար: Տուն գացեր էր, նոյն իրիկուն, և բերկրութեամբ աղաղակեր. «Վերջապէս փրկուեցանք...»: Եւ յաջորդ առաւօտ իսկ փակեր էր իր աչքերը՝ յաւիտեան:

Գ.

«Հառաչանք», «Ծովեր», «Գերեզմանի Ծաղիկներ», «Տաւիլ Եւոդեան». չորս հատոր: Աչքիս առջեւ ունիմ վերջին երկու հատորները: Ժամանակակից հայ գրականութեան ամենէն խորաթափանց և մեծատաղանդ քննադատներէն մին, ան՝ որ Վարուժանի մեծութիւնը գուշակեց «Սարսուռներուն» ի տես, Կառավարենցի քերթուածները կոչած է «սիրուն ծաղիկներ», առանց բոյրի»: Տարակոյս չկայ թէ այս բանաստեղծին քնարը կարելի չէ բաղդատել Վարուժանի և Սիամանթոյի «արոյրէ մեծահունչ» քնարներուն հետ, բայց այդ քնարը իւրայայտուկ քաղցր ձայն մը ունեցած է շատ յաճախ:

Կառավարենց տիրապետած էր հայ լեզուին,

ինչպէս շատ քիչեր՝ ժամանակակից մեր մտաւորականութեան մէջ: Ոչ միայն այդ մոգական կարողութեամբ՝ ան յաջողած էր ճկել այդ լեզուն այնպիսի ներդաշնակութեան մը՝ որ աննախընթաց է Մեսրոպեան տառերով հիւսուած մեր գրականութեան մէջ, և յաջողած է ալ մեզի մերթ այնպիսի ծաղիկներ, որոնք ոչ միայն սիրուն տեսք ունին, այլ նաեւ բոյր: Լսեցէք «Աչքերուն երգը».

«Քու այդ
Քուայթ
Աչքերներուդ հըմայքին
Վայրի
Հուրի
Զոհեմ բերեր իմ հոգին»

Յոյզեր
Ու սէր
Վիհերուն խոր էթէ կան —
Քու այդ
Քու մայթ
Աչքերներուդ դիւթական —

Եւ ալ
Յուսալ
Պիտ՝ ուզէի հոգեւին,
Քու այդ
Քու մայթ
Աչքերներուդ գորովին...»

Սոխակի մը սիրերգն է կարծես, մաքուր, վճիտ, ճիւղէ ճիւղ երգուած:
Ահա ձեզի ուրիշ մը. «Յայգային».

«Գիշերն ուլ է
Հոգին անոյշ է
Սարերուն.
Թախիծն հովին՝
Կը հեծէ վին
Մը հեռուն»

Լուսնակին տակ
Լիճն ըսպիտակ
Կ'երագէ
Գալարն ափին
Բուրեան, նրբին
Մետաքս է:

...
Քար մը սընար
Ծառ մը բընար
Ընտրեցի:

Սօսափն օրօր
Սարսափն անդորր
Ե ինծի... »:

Ճիշտ է, այս քերթուածիկները խորախորհուրդ
զաղափարներ չեն բովանդակեր, բայց իրենց
երաժշտականութեամբ կը ստեղծեն զգայնութիւն
մը՝ որ հաճելի է:

« De la musique avant toute chose » կ'ա-
ղաղակէր Բօլ Վէրլէն: Աւանց ունենալու ֆրան-
սացի այս գերահռչակ բանաստեղծին ցաւամած,
մեծասարսուռ, նրբերանգներով առլի, տարտամ
տողերուն ուժը, կառավարենց իր երաժշտակա-
նութեամբ յաճախ կը յիշեցնէր զայն, ոչ միայն
նմանահնչութեամբ (onomatopoeisme) այլ նաեւ
խորքով: Բաղդատել, օրինակի համար, Վերլ-
լենի « Chanson d'Automne »-ը կառավարենցի
« Ծո՞ւր, ծո՞ւր » քերթուածին հետ: (Տարբեր
նիւթեր անշուշտ): Ինչպէս նաեւ « Il pleut sur
la ville »-ը « Վիլն անձրեւիկ կը հեծէ »-ին հետ:

Կերպարանկութեան այս որոնումը տարած է
հայ բանաստեղծը երգելու մինչեւ իսկ նիւթեր՝
որոնց համար անհրաժեշտ չէր արտայայտու-
թեան այդ ձեւը. տես « Որբերը ».

« Ժամուն բակին
Եղբայրազին
Աւրնթեր
Մեծ ու պզտիկ
Ծաւապատիկ
Են նստեր, »

Աւազներէն
Եկածներ են
Անոնք հոս
Հիւր են եկեր
Ունին վէրքեր
Ուղիւհաւոս:

...
Չեն բարբառեր
Լոկ անյարեր
Կը նային,
Սեւ ու խոռով
Աչուրներով
Երկնային »:

Այնուհանդերձ այս տեսակ երգերն իսկ կա-
րելի չէ բաղդատել այն երգերուն հետ, զորս
Աղեքսանդր Փանոսեան կը յօրինէր, նախ յան-

գերը որոշելով կարծես և յետոյ լեցնելով տո-
ղերը... Կառավարենց ճշմարիտ արուեստագէտ
մ'է փանոսեանի քով, որ տաղաչափ մ'էր սոսկ:

Այս խորհրդածութիւնները կը կատարեմ
աչքիս առջեւ ունենալով միայն « Գերեզմանի
Ծաղիկներ »-ը, զորս խորհրդահայ քննադատ
Սուրխաթեան յարմար դատած էր որ միայն...
գերեզմանի մէջ:

Ինչ ըսած էր կառավարենց:

« Այլակերպուած սոխակ մ'է ընհարս,
Մահակոծ կոչնակ մը միանգամայն.
Աստղերէն առի լարերն ոսկեվարս,
Իր ծոցէն հոգիս կը սուրայ համայն,
Ձեզի՛, ո՛վ հնչուն սրտեր, իմ ընծան,
Ձայն հնչեցուցէք օրհասէ օրհաս.
Տաղերս — արձագանգ մոնոնդ լըռութեան
Թող միշտ օրօրեն վշտեր ու երազ:

Իսկ եթէ ո՛չ ոք լըսել քեզ հաճի,
Կամ ամբողջն ժիտ ձեռք մը, յեղակարծ,
Ուզէ քեզ յանձնել բոցերուն արծարծ,
Վերադարձիւ ինձ, ընհար իմ խաչի,
Քեզ պիտի տանիմ դամբանէ դամբան,
Որբին ունկնդիր մեռելները կան... »:

Թող չայլայլի Սուրխաթեան. Կառավարենցէն
առաջ՝ տիտան մը կայ, Շարլ Պօտլեր, որ մեր-
ձաւորապէս նոյն բանն ըսած է. « Շիրիմը
կ'ըմբռնէ բանաստեղծը »: Բայց Պօտլերը քննա-
դատելու համար՝ Պօտլերի հասակն ունենալու է:

« Տաւիղ Եւոդեան »-ի մէջ կառավարենց կ'ե-
րեւի աւելի հասուն, աւելի խնամուած, աւելի
արուեստագէտ, աւելի հարուստ: Կ'արժէ որ մեր
ձեռնհաս քննադատներէն մին առանձին ու-
սումնասիրութեան ենթարկէ այդ հատորը:

Չմոռնամ ըսելու որ Կառավարենց իր նախա-
հայրերուն կրօնքին հաւատարիմ լուսաւոր հոգի
մ'ունէր.

« Փուշերուն ժպտող վարդն եմ ես, ով Տէր,
Մոխիրն՝ յանձնուած հողմերու զութին...
Եղբայրիս վերեւ աճեցուր որթեր.
Տանջուել ուզող մարդն եմ ես, ով Տէր:

և դեռ՝

« Այն ցօղին համար՝ որով կը Թըշեմ
Յոյսն հիւանդ՝ հազիւ ծըլած անուրջէս,
Կ'ուզէի ես դեռ
Նոր ծաղիկ մ'ըլլալ ու բուրել քեզ, Տէր... »:

Այն գուրգուրանքով որով կը փարիս
Իր յաղթանակէն դժգոհ թշուառիս

Կ'ուզէի ես դեռ
Հորեզոն մ'ըլլալ ու զրկել քեզ, Տէր... »:

Աւաղ, ինչքան ուշ է ճամբուս վերան.
Սէրերուս համար, խորանէ խորան,

Կ'ուզէի ես դեռ
Սուրբ աղօթք մ'ըլլալ ու փնտռել քեզ, Տէր... »:

Խաւարին երախն ահա կը բացուի.
Որ չըմուրի հոգիս անաչուի

Կ'ուզէի ես դեռ
Ճառագայթ մ'ըլլալ ու տեսնել քեզ, Տէր... »:

Ո՛վ կարող է ըսել թէ այս քերթուածը գուրկ է
գեղեցկութենէ ու խորքէ:

Կառավարենց եղած է նաեւ կարող թարգ-
մանիչ. Լըգոնդ Տը Լիլէն մինչեւ Հերետիա,
Բրիւտոմ, Գոբէ, Վերլենէն մինչեւ Մալարմէ,
Ապէր Սամենէն մինչեւ Ժան Ռիշթէն, և մինչեւ
արդի ֆրանսացի և զուիցերիացի բանաստեղծ-
ները ներկայացուցած է մեզի՝ իսկապէս ճար-
տարօրէն:

Ի մի խմբել այդ թարգմանութիւնները և ի
լոյս ընծայել զանոնք անտիպ ինքնագիր քեր-
թուածներուն հետ, կը նշանակէ մեծագոյն մե-
ծարանքն ընծայած ըլլալ արժանաւոր այս
մտաւորականին:

Հրաւ ԲԱԶԱՐԵՆՑ

Վեմետիկ, 20 Սեպտ. 1946.

Ս Ր Տ Ի Ն Հ Ա Մ Ա Ր

Մեր սրտերուն համար կուգայ լոկ գարունն,
Որ տանջանքներն երբեմն զայն գէթ թողուն.
Աստղի նըման անգիտակից հրճուելու
Եւ վշտերուն ըստիմանքի խօսք տալու:

Ու հազարներ եկան գացին ինձ նըման
Իւրաքանչիւրն ունէր երազ նոր գարնան,
Ոչ ոք սակայն թողուց մեզի յիշատակ
Երգի մը մէջ, կամ կապոյտի թեւին տակ:

Պէտք է ամէն սիրտ յարդարէ իր ճամբան,
Ճակատագիրն այս է թշուառ մարդկութեան.
Տղան մօրմէն պայծառ հոգի կը ստանայ,

Բայց վիշտն է որ անոր ճամբան կը բանայ.
Անոր համար մարդիկ գարուն կ'երազեն
Որ շիրմի մէջ շողեր տանին արեւէն:

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Քեմիա 4 Մայիս 1946.